Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Պտղնիի գյուղական համայնքի հաշվետու համայնքային ժողովի

26. 06 .2013 թ. գ. Պտղնի

2013թվական Հունիսի 26 -ին տեղի ունեցավ Պտղնի հանայնքի հաշվետու համայնքային ժողովը:

Ժողովին ներկա էին համայնքի ավագանու 6 անդամներ՝

1.Վազգեն Ասատրյանը

2. Աշոտ Գաբրիելյանը

3. Արման Ղևոնդյանը

4. Պապին Մովսիսյանը

5. Միասնիկ Մովսեսյանը

6. Հակոբ Վիրաբյանը

Համայնքի ղեկավարի աշխատակազմը՝

1. Ռուբեն Ստամբոլցյանը
2.Մարատ Պետրոսյանը
3.Անահիտ Գևորգյանը
4.Գայանե Բելլույանը
5.Անժիկ Մովսիսյանը
6.Նազիկ Պետրոսյանը
7.Կարինե Ղազարյանը
8.Ռիմա Ասատրյանը
9.Սարգիս Վարդանյանը
10.Լիլիթ Հարությունյանը
11. Հովհաննես Մանուկյանը
12. Վրեժ Գրիգորյանը

Ժողովին մասնակցում էին համայնքի բնակիչները

ՕՐԱԿԱՐԳ

1.Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հանրային իրազեկման մասին:

2.Ընթացիկ հարցեր

Համայնքի ղեկավար Առաքել Վիրաբյանը համայնքի բնակչությանը ներկայացրեց, որ 2012 թվականին և 2013թվականի վեց ամիսների ընթացքում համայնքի ղեկավարի և ավագանու կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները:

2011 թվականի Դեկտեմբերի 5-ին համայնքի ավագանու N 31-Ն որոշմամբ հաստատվել է 2012 թվականի բյուջեն՝

վարչական – 25080.4 , ֆոնդային –4183.7

Բյուջեն կատարվել է վարչական 87 %- ով , ֆոնդային 127.7 % -ով:

Համայնքի բնակիչներին հատկացվել է 560000 դրամի դրամական օգնություն:

2012 թվականի Դեկտեմբերի 25-ին համայնքի ավագանու N 40-Ն որոշմամբ հաստատվել է 2013 թվականի բյուջեն

վարչական – 28281.2, ֆոնդային –1869.3

Համայնքի բնակիչներին, Հայրենական մեծ պատերազմի վետերաններին և ղարաբաղյան պատերազմում զոհվածների ընտանիքներին հատկացվել է 200000 դրամի դրամական օգնություն:

Տեղեկացնում եմ Ձեզ,որ բյուջեն 5ամիսների ընթացքում կատարվել է՝

վարչական 77.2 % , ֆոնդային 73.3 %

Ելույթ ունեցավ Վազգեն Ասատրյանը՝

Նա նշեց, որ բնակչությունը դարձել է անվճարունակ, որովհետև աշխատանք չունի: Համայմքի տարածքում կա շուրջ 3500 այգեգործական ընկերության անդամներ, որոնց մեծ մասից հնարավոր չէ գումարներ գանձել քանի որ այգեգործական տարածք չեն գալիս:

Համայնքի բնակիչ Ատոմ Պողոսյանը առաջարկեց, որ ավագանու անդամները աշխատակազմի աշխատակիցների հետ այցելեն այգեգործական տարածքներ , տեղեկացնեն նրանց պարտքերի մասին , թաղամասերում փակցնեն հայտարարություններ հողի հարկի և գույքահարկի մասին:

ՈՐՈՇՎԵՑ

5. Հաշվետվությունը ընդունել ի գիտություն
6. Աշխատել մինչև տարեվերջ բյուջեի կատարողականը հասցնել մինչև 100%-ի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՎԻՐԱԲՅԱՆ